էր պառավի հետևից: Կախարդի ծառաները տեսնելով՝ բռնեցին հորթը և ասացին՝ մատաղ է եկել վարդապետի համար: Իսկ պառավը լալիս և ասում էր՝ այդ հորթը իմն է, մատաղ չէ, Աստծու սիրուն, թողեք իմ հորթը: Նրան չլսեցին, այլ հորթը մորթեցին և մասմաս բաժանեցին, մինչև իսկ կաշին, թրիքը բաժանեցին որպես սրբություն:

Կախարդին վերցրին բերին Քանաքեռ և տարան ներքևի եկեղեցին: Եվ որովհետև տեղը չբավականացրեց, ելավ նստեց սեղանի վրա, ոտքերը վայր կախած վայրահաչում էր դեպ աբեղաները և ասում՝ ով որ մի աբեղա սպանի, նրա մեղքերի վերաբերյալ հարցաքննություն չի լինի, այլ կգնա Աստծու արքայությունը: Մի մարդ նույն Քանաքեռ գյուղից, որ կոչվում էր Թութակենց Հակոբ, գնաց խոստովանելու նրան և խնդրեց մեղքերի թողություն: Նա ասաց՝ գնա մի աբեղա սպանիր և մսից ու արյունից բեր, որ միսն ուտեմ ու արյունը խմեմ, պատարագ կանեմ և քառասունամյա մեռելին հարություն կտամ: Այդ ժամանակ քո մեղքերին թողություն կլինի: Եվ այդ հիմարը հավատաց, նույն գիշեր գնաց վանքի դուռը և սպասում էր, որ գուցե Միքայել աբեղան ելնի: Այս այն Միքայելն է, որ գրքիս այս գլխում հիշատակեցինք, որովհետև նա մյուսներից կրտսեր էր: Մեկ էլ տեսնում է, որ ահա եկավ Փիլիպոս եպիսկոպոսը: Եվ այդ Հակոբը հարձակվեց նրա վրա և կացնակը բարձրացրեց եպիսկոպոսի գլխին: Եպիսկոպոսն ասաց՝ գժվեցի՞ր, Հակոբ: Եվ Հակոբը ասաց՝ մեղա քեզ, տեր Փիլիպոս, քանզի ես կարծեցի, թե դու Միհրանն ես, քանզի Միքայելի աշխարհիկ անունը Միհրան էր: Եվ Հակոբը նրան պատմեց ամենը: Իսկ եպիսկոպոսը խրատեց նրան ու ասաց՝ նա ոչ պատարագող է և ոչ էլ մեռել հարուցանող, այլ այն է, որ քեզ մարդասպան անի ու արենտեր: Հակոբը ելավ գնաց՝ վայ տալով իրեն:

Եվ այնտեղ Քանաքեռում էին կաթողիկոսը և խանի զինվորները. սրանք լսելով այդ բաները, հանին նրան, քշեցին մինչև Նիգ (Ապարան) գավառը, այնտեղից մինչև Կարին. ասում էր գնամ Երուսաղեմ: Կարինում էր գտնվում Կեղացի Պողոս վարդապետը: Այստեղից գրեցին նրան դրա չարության մասին, իսկ նա (վարդապետը) բռնեց նրան, վեղարն ու փիլոնը առավ և Երուսաղեմի ուխտավորներին պատվիրեց նրան չընդունել իրենց մեջ: Եվ նա այդ-

պես կորավ ու վերացավ մեջտեղից՝ ընդունելով հավիտենական կորուստը: Նրա կորստից հետո նույնի արբանյակները համբավեցին, թե Ամիրգունա խանը ճիպոտով զարկեց վարդապետին, այդ ժամանակ խանի դեմքը ծռվեց և ձեռքերը թուլացան: Դեռ մինչև այսօր էլ ասում են:

ԳԼՈՒԽ Լ
ՄՈՎՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻ ՓՈՔՐԻԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մովսես կաթողիկոսի մասին ինչ որ կա, գրել է Առաքել պատմագիրը՝ ծնունդից մինչև նրա մահը: Իսկ մենք այն, ինչ լսեցինք նրա մասին Հակոբ կաթողիկոսից, այստեղ կհայտնենք: Քանզի ինչպես որ գրել է Առաքել պատմագիրը, թե Մելիքսեթ կաթողիկոսը թշնամացավ Մովսես վարդապետին և ասաց՝ ելիր այս երկրից և գնա այստեղից, ուր կամենում ես: Նա գնաց Խնկելոճոր գյուղը, որ այժմ կոչվում է Ձորագեղ[88], որ մոտ է Երևանի բերդին: Այնտեղ նա քարոզում էր Աստծու խոսքը՝ Քրիստոսին, մինչև որ իրեն ընկերներ գտնի և նրանց հետ գնա Հունաստան: Բայց նրա խոսքը եղավ ըստ փրկչի հրամանի, որ ասում է՝ վառված ճրագը չի թաքչում, իսկ կայծյալ պատրույգը չի շիջում*: Այս եղավ սուրբ վարդապետ Մովսեսի վերաբերմամբ հետևյալ ձևով:

Երևան քաղաքում Հովհաննես անունով մի մարդ էր ապրում, սա ուներ մի կին Աջաբխան անունով, իսկ Աջաբխանի քույրը Ամիրգունա խանի կինն էր՝ Հուսմիխան անունով: Աջաբխանը սկսեց ատել իր ամուսին Հովհաննեսին, որպես թե չքնաղագեղը տգեղի և ազնվականը անշուք մեկի հետ է: Եվ այսպես միշտ արհամարհում էր ու քամահրում և իր ամուսնու հետ չէր խոսում, իսկ խրատու քահանաներին չէր լսում, մինչև իսկ խանն էլ խրատեց, բայց սա խանին էլ չլսեց:

Օրերից մի օր Աջաբխանը գնաց Ձորագեղ, որպեսզի լսի վարդապետի քարոզը: Վարդապետը ըստ քարոզի կարգի ասաց՝ եթե կինը հեռանում է ամուսնուց, շնանում է*: Այս բանը սուրբ վարդա-

* Աստվածաշնչում ասված է. Ձեղեգն ջախջախեալ մի՛ բեկցէ, և զպատրոյգն առկայծեալ մի շիջուսցէ, Ես., ԽԲ 3: